Ադամեանը ունի Մարաշի աւետարանից հանուած ութ խորաններ։ Այդ աւետարանը պարոնի հայրը Դր. Մելքոն Ադամեանը պահ է տուել Ամերիկացի միսիոնար Ֆէյ Լայմըն Նէլսոսին որ 1928 թուին հայրենիք է վերադարձել եւ ապրում է Նիւ-Հէմշայրում։ Միսիոնարի ասելով, Թուրքերը թալանել են իւր իրերը, դորա հետ էլ աւետարանը։ Այդ ութ խորանները պ. Նազարէթին յիշատակ են մնացել հօրից։

Երբ առաջին անգամ տեսանք այդ չքեղ եւ գեղեցիկ խորանները, իսկոյն մեր մտքով անցաւ թէ դրանք Թորոս Ռոսլինի գործերը պիտի լինին, ուստի եւ իրաւունք խնդրեցինք լուսանկարել տալ եւ կաղապարներ պատրաստել այս յօդուածի համար, որ սիրալիր կերպով կատարել են պ. պ. Ովսիա Երամեան եւ Ճէլալեան։ Այժմ սքանչելի այդ ութ խորանների համեմատութեամբ՝ Թորոս Ռոսլինի թուականով եւ տեղով յայտնի գործերի հետ, առաւել եւս հաստատւում է եւ համոզում դառնում մեր նախկին տպաւորութիւնը, թէ դրանք Թորոսի գործերն են։ Ճշմարիտ է, կան մեծ նմանութիւնների հետ համապատասխան խորանների մէջ եւ տարբերութիւններ, բայց այդ յատուկ է Թորոսի բոլոր գործերին։ Նա կատարում է մի եւ նոյն մոտիւների տեղափոխութիւն կամ մի նոր բան է աւելացնում, այսպիսով բազմազանութիւն մտցնելով իւր գործերի մէջ եւ ոչ մեքենական կրկնութիւն կամ արտանկարութիւն նախկին գործերի։ Անհաւանական չէ, որ այս հատակոտորները Թորոսի նախորդ Յովհաննէսինը լինին, որի գործերի հետ մեծ առնչութիւն ունի Թորոսը։

Խորաններն առհասարակ զոյգ զոյգ են. այսինքն իւրաքանչիւր զոյգը իրար, գրեթէ, նման Թորոսի եւ Յովհաննէսի գործերում։ Այստեղ էլ տեսնում ենք նոյնը. Պատկ. 19–20, 21–22, 23–24 եւ 25–26 զոյգեր են, մեծութիւնները 26×19 սմ.։ Վերցնենք առաջին զոյգը. վերին ճակատի աջ կողմի թռչունը, կտցին ձուկ բռնած, ճիշդ նոյնանում է Երուսաղէմի No. 251, 5բ.-ին։ Որոշ նմանութիւն ունին եւ քառանկիւնները կողքերի վառուող մոմերի հետ։ Խորան 21–ը նոյնանում է Երուս.-ի No. 251–ին ճակատի զարդով, խորանի կողքի բուսական կամ արմաւենիկի զարդով թռչունի հետ, քառանկիւնու մէջ մեծ կամարով եւ կապերտաղարդով, սիւներով եւ խոյակներով, նրանց կողքերի ծառերով եւ թռչուններով։ Խորան 22–ը ճակատի կենդանութեան աղբիւրով եւ կաքաւներով, սիւներով եւ կողքի ծառերով ու թռչուններով։ Նոյնը նաեւ Սեբաստիայի, այժմ Բալթիմորի No. 539, թերթ 6–ի հետ։ Խորան 23–ը նոյնանում է ճակատի կռուող աքաղաղներով եւ, քառանկիւնու ընդհանուր նմանութեամբ, սիւների կողքի ծառերը թռչուններով նման զոյգի միւս խորանին, պատկ. 24–ի քառանկիւնու մէջ երկու մօրուքաւոր դէմքերը նոյն Երուս.-ի No. 251–ի հետ, ինչպէս ճակատի երկու աքլորները անօթով։ Պատկ. 25–26 խոյակներով նման, 26–ը ջայլամով եւ սիրամարդով, քառանկիւնու չրջանակի կապերտաղարդով։

Այժմ համեմատենք Երուս.-ի No. 1956–ի հետ, որ Թորոսի գործն է 1265 թուից։ Պատկ. 19–20 սիւներով եւ կողքերի թռչուններով, մի աշտանակով թռչունի հետ։ Պատկ. 21–22 ճակատի զարդով, քառանկիւնու մեծ կամարով եւ կապերտաղարդով, ջուր խմող կաքաւներով (Պատկ. 22) աղբիւրի հետ, քառանկիւնու կողքի արմաւենիկի տերեւով վերան թռչուն։ Նոյն աղբիւրը նաեւ Սեբաստիայի աւետարանի մէջ, թերթ 6։ Պատկ. 23–24 ճակատի կռուող եւ իրար դէմ կեցած աքաղաղներով անօթների երկու կողմից, խորանի քառանկիւնու ձեւակերպութեամբ, սիւներով, 24–ի նմանութիւնը Պատկ. 10–ի հետ ակներեւ է, ընթերցողը ինքը կարող է տեսնել պատկերների համեմատութեամբ։ Նոյն նմանութիւնը այս պատկերի Սեբաստիոյ այժմ Բալթիմորի No. 539–ի թերթ 8–ի հետ. (Պատկ. 5) 26–27–ի նմանութիւնները ճակատի թռչունների, սիւների եւ կողքի ծառերի վերայ եղած թռչուններով։

Նման յարաբերութիւն տեսնում ենք նաեւ Երուս.-ի No. 251–ի հետ, որից Պատկ. 4, համեմատել պէտք է մեր հատակոտորի (Fragment) Պատկ. 22–ի հետ, իսկ 23–ը Սեբաստիայի կամ Բալթիմորի աւետարանի հետ։ Այսչափս բաւական համարենք, մեր վերեւ արտայայտած միտքը հաստատելու համար։

Մեր ցուցադրած եւ համեմատութեան ենթարկած պատկերները մեծագոյն մասով խորաններ են, որ ընթերցողներից շատերին անհասկանալի են իրենց բուսական եւ կենդանական զարդարանքներով։ Դրանք միայն դեկորատիւ զարդարանքնե՞ր են, թէ որ եւ է իմաստ ունին։ Անշո՛ւշտ, այդ արտաքին հանդամանքն անտեսուած չէ, բայց դորանից